ԿՐԹԱԿԱՆ

ՊԱՐՏԱԴԻՐ ՀԱՄԱԶԳԵՍՏ՝ I-VI ԴԱՍԱՐԱՆՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱԳՈՒՍՏԻ ԻՐԱՑՄԱՆ ԿԵՏԵՐ ԿԳՈՐԾԵՆ ԹԲԻԼԻՍԻ ԹԻՎ 126, ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏՆԵՐՈՒՄ՝ ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ԹԻՎ 4, ՆԻՆՈԾՄԻՆԴԱՅԻ ԹԻՎ 4, ԾԱԼԿԱՅԻ ԹԻՎ 1, ՄԱՌՆԵՈՒԼԻԻ ՁԱՆԴԱՐԱ ԳՅՈՒՂԻ ԵՎ ՇԱՀՈՒՄՅԱՆ ԱՎԱՆԻ ԹԻՎ 2 ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ...



Վրաստանի կրթական ոլորտում ընթացող բարեփոխումների շրջանակում նոր ուսումնական տարվանից I-VI դասարանի աշակերտների համար դպրոցական համազգեստ կրելը պարտադիր է դառնում:

«Ցանկանում եմ հանրությանը տեղեկացնել, որ դպրոցական համազգեստի բոլոր մոդելները հաջողությամբ ենթարկվել են միջազգայնորեն հավատարմագրված շվեյցարական "SGS-CSTC Standards Technical Services Co., Ltd." լաբորատորիայի փորձարկումներին եւ լիովին համապատասխանում են գործող պահանջներին ու չափորոշիչներին: Փորձարկման արդյունքները հաստատում են, որ համազգեստը, որն ամենակարեւորն է, անվտանգ է առողջության համար, իսկ դիմացկուն ու գործնական նյութը նախատեսված է ակտիվ ամենօրյա օգտագործման համար»,- տեսաուղերձում նշել է Վրաստանի կրթության, գիտության եւ երիտասարդության նախարար Գիվի Միքանաձեն՝ ներկայացնելով դպրոցական համազգեստին վերաբերող մանրամասները:

Համաձայն նախարարության որոշման՝ դպրոցական բաճկոնի (պիջակի) արժեքը սահմանվել է 45 լարի, իսկ դպրոցական տաբատի (շալվարի) եւ կիսաշրջազգեստի արժեքը՝ 25-ական լարի: Ընդ որում, խանութներին արգելված է համազգեստի տարրերը վաճառել սահմանվածից տարբերվող գնով:

Շուկայական հետազոտությունում հաղթող ճանաչված չինական «Glory Textile Industry» ընկերությունը ապահովել է համազգեստի արտադրությունն ու առաքումը, որն իրականացվում է 3 փուլով. առաջինը՝ օգոստոսի 25-ին, երկրորդը՝ հոկտեմբերի 15-ին, իսկ երրորդ փուլը՝ նոյեմբերի 30-ին:

Մեկնարկային փուլում՝ սեպտեմբերի 1-ից 14-ը, ամբողջ երկրում կիրականացվի առաջին դասարանի աշակերտների համազգեստների վաճառքը: Համազգեստը բոլոր ընտանիքների համար հեշտությամբ հասանելի դարձնելու նպատակով վաճառքի կետեր կգործեն Վրաստանի բոլոր մունիցիպալիտետներում, բացի այդ, ծնողները հնարավորություն կունենան անհրաժեշտ չափսն ու մոդելը ձեռք բերել նաեւ առցանց:

Վրաստանի կառավարության որոշմամբ՝ համազգեստն անվճար կտրամադրվի հանրակրթական դպրոցների տարրական դասարանների որոշակի խմբերի: Այս արտոնությունից կօգտվեն սոցիալապես անապահով ընտանիքների միասնական տվյալների բազայում գրանցված այն աշակերտները, որոնց ընտանիքների վարկանիշային միավորը 60 000 է կամ ավելի պակաս: Անվճար համազգեստ կստանան նաեւ պետական խնամքի տակ գտնվող սաները, ինչպես նաեւ ուկրաինացի այն երեխաները, որոնք 2022 թվականի փետրվարի 24-ին Ուկրաինայում սկսված ռազմական գործողությունների հետեւանքով տեղափոխվել են Վրաստան եւ ուսումը շարունակում են տեղի հանրակրթական դպրոցներում:

Առաջին փուլում դպրոցական համազգեստի իրացման կետեր կգործեն հետեւյալ հասցեներում. Թբիլիսի՝ թիվ 126 հանրային դպրոց (Սաբուրթալո, Վաժա-Փշավելայի պողոտա, թիվ 71), Ախալքալաքիի մունիցիպալիտետ՝ Ախալքալաքիի թիվ 4 հանրային դպրոց, Նինոծմինդայի մունիցիպալիտետ՝ Նինոծմինդայի թիվ 4 հանրային դպրոց, Ծալկայի մունիցիպալիտետ՝ Ծալկայի թիվ 1 հանրային դպրոց, Մառնեուլիի մունիցիպալիտետ՝ Ջանդարա գյուղի եւ Շահումյան ավանի թիվ 2 հանրային դպրոցներ, Ախալցիխե՝ Ախալցիխեի թիվ 5 հանրային դպրոց:

Աշակերտի՝ առանց համազգեստի դպրոց ներկայանալու դեպքում, հաստատությունը, ծնողի հետ համագործակցությամբ, կպարզի դրա պատճառները: Եթե երեխան առողջական վիճակի պատճառով չի կարող համազգեստ կրել, ծնողը կներկայացնի համապատասխան բժշկական տեղեկանք, որի հիման վրա աշակերտն ազատվում է համազգեստ կրելուց եւ պարտավոր է միայն պահպանել դպրոցի ներքին կանոնակարգով սահմանված հագուստի կանոնները:

Յուրաքանչյուր նման դեպք կքննարկվի անհատապես՝ հաշվի առնելով երեխայի առողջությունը եւ շահերը: Եթե ծնողը չի կարող հիմնավորել, թե ինչու է աշակերտը հրաժարվում դպրոցական համազգեստ կրել, հարցը կկարգավորվի դպրոցի ներքին կանոնակարգին համապատասխան:

ՄԱՆՈՒԿ ԿԱՐԻՆՅԱՆ

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ՍԻԼՎԱ ՍԻՓԱՆՈՒՀԻ. «ԿՅԱՆՔԻՍ ԿԱՐԵՎՈՐ ՉԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ ՀՈԳԵՎՈՐ ԵՆ»

Օգոստոսի 21-ին իր ծննդյան տարեդարձը նշեց Վրաստանում եւ Հայաստանում սիրված բանաստեղծուհի Սիլվա Սիփանուհին, ում ստեղծագործությունները տարիներ շարունակ հուզում ու ոգեշնչում են ընթերցողին՝ ստիպելով խորհել կյանքի, հոգեւոր արժեքների եւ կեցության մասին: Տարեդարձի առիթով «Վրաստան» թերթը զրուցեց բանաստեղծուհու հետ՝ նրա անցած ուղու, գրողի դերի եւ առաքելության շուրջ:

- Տիկի՛ն Սիլվա, շնորհավորում ենք Ձեզ: Երբ հետադարձ հայացք եք գցում Ձեր անցած ուղուն, ինչպե՞ս կընութագրեք այն եւ որո՞նք եք համարում Ձեր կյանքի ամենակարեւոր ձեռքբերումները:

- Շնորհակալ եմ ջերմ խոսքերի եւ ուշադրության համար: Գիտեք, անցած ճանապարհս լի է եղել վերելքներով ու դժվարություններով, բայց ես երախտապարտ եմ իմ ճակատագրին յուրաքանչյուր քայլի համար: Իսկ ինչ վերաբերում է կյանքի կարեւոր ձեռքբերումներին՝ դրանք ինձ համար նյութական չեն, հոգեւոր են՝ ընթերցողների սերը, երջանկահիշատակ ամուսինս՝ բանաստեղծ Գուրի Եթերը, մեր ութ զավակներն ու թոռները, որոնց հաջողություններն ինձ թեւեր են տալիս:

- Քանի՞ գրքի հեղինակ եք եւ ինչո՞ւ եք ընդհանրապես գրիչ վերցրել:

- Ունեմ հրատարակված «Արգելված պտուղ», «Սիրո մրցանակ» եւ «Երեք օր» գրքերը: Իմ ստեղծագործություններն առանցքային տարրերով ներծծված են մարդկային ամենաանկիրակական զգացմունքներին՝ սիրուն, հավատարմությանը, կյանքի արժեքներին եւ, անշուշտ, մեր հայրենի Ջավախեթիին: Իսկ գրիչ վերցնելու դրդապատճառը հոգուս ներքին կանչն էր՝ կիսվելու այն ամենով, ինչն ալեկոծում էր սիրտս: Գրականությունը դարձավ իմ կյանքի ապավենը, հատկապես Գուրիի կողքին, ում հետ մենք ոչ միայն կյանքի ընկերներ էինք, այլեւ ստեղծագործական համախոհներ...

- ...Գիտենք, որ վերջին տարիներին անցկացվում է Գուրի Եթերին նվիրված պոեզիայի օր: Կպատմե՞ք այդ մասին:

- «Գուրի Եթերի պոեզիայի օրը» հիմնադրվել է 2015 թվականին, եւ այս տարի՝ օգոստոսի 30-ին, Ախալքալաքիի մշակույթի տանը արդեն տասներկուերորդ անգամ կմեկնտեղվեն Գուրիի պոեզիայի երկրպագուները: Նշեմ, որ մեր Աբուլ լեռան գագաթին տեղադրված է Գուրի Եթերին նվիրված խաչը, որի տակ ամփոփված է նրա գերեզմանից բերված հողն ու արյունը: Նախկինում երեք անգամ կազմակերպվել է հիշատակի ու ոգեկոչման երթ դեպի Գուրիի խաչը եւ հուսամ, որ այս ավանդույթը կշարունակվի:

Իմ կյանքի գլխավոր առաքելությունը համարելով Գուրի Եթերի անտիպ ժառանգությունը պահպանելն ու ընթերցողին հասցնելը՝ հետմահու կարողացել ենք տպագրել «Իմ Շիրազը», «Հոգեւոր տաղարան», «Կենաց տասներկու գավաթներ», «Ստեղծումն վարքի» եւ «Աբգար արքա» գրքերը: Իսկ անելիքներ ու ստեղծագործական ծրագրեր դեռ շա՜տ ունենք:

- Ի՞նչ եք կարծում՝ որն է գրողի, արվեստագետի հիմնական առաքելությունն այսօր: Կարո՞ղ է բանաստեղծական խոսքը փոխել ինչ-որ բան:

- Գրողի առաքելությունը բոլոր ժամանակներում էլ եղել է հասարակության խղճի ձայնը լինելը: Գրողը չի կարող փակվել իր «փղոսկրյա աշտարակում» եւ անտարբեր լինել մարդկության ցավի հանդեպ: Բանաստեղծական խոսքը, գուցե, չի կարող դեռեւս պատերազմներ կանգնեցնել կամ տնտեսական խնդիրներ լուծել, բայց այն՝ բանաստեղծություն կոչվածը, հատկապես քնարերգությունն ունի ավելի հզոր ուժ՝ այն բուժում է մարդու հոգին, սթափեցնում է միտքը եւ լույս է վառում ամենամութ պահերին: Գրողի դերը մարդուն դեպի բարին, գեղեցիկն ու ճշմարիտը առաջնորդելն է:

- Տիկի՛ն Սիլվա, «ՎՐԱՍՏԱՆԻ» եւ նրա ընթերցողների անունից հաջողություն եւ ստեղծագործական նորանոր վերելքներ ենք մաղթում Ձեզ հետագա գործունեության մեջ:

- Շնորհակալ եմ, հատկապես «Վրաստան» թերթին եւ իմ բոլոր ընթերցողներին՝ ծննդյանս առիթով ջերմ խոսքերի համար:

Թո'ղ խաղաղությունն ու բարությունը ուղեկից լինեն բոլորիս:

ԶՐՈՒՑԵՑ՝ ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔ

ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԱՆՁԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ

ԻՆՉՊԵՍ ՕԳՏՎԵԼ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Պահպանության ոստիկանությունը Վրաստանի ներքին գործերի նախարարության հանրային իրավունքի իրավաբանական անձ է, որը գործում է 2004 թվականից:

Պահպանության ոստիկանության առաքելությունը երկրի քաղաքացիների անվտանգության ապահովման ու նրանց գործունեության համար առողջ միջավայրի ստեղծումն է: Պահպանության ոստիկանության հիմնական գործունեությունն իրենից ներկայացնում է իրավաբանական/ֆիզիկական անձանց գույքի եւ անձի անվտանգության պահպանություն, ինչպես նաեւ երկրի ռազմավարական նշանակության օբյեկտների պահպանություն:

Վրաստանի ողջ տարածքում պահպանության ոստիկանության կողմից (ինչպես տեխնիկական միջոցներով, այնպես էլ՝ ոստիկանության ուժերով) պաշտպանված է ավելի քան 15 հազար օբյեկտ, այդ թվում՝ նշանակալի ռազմավարական օբյեկտներ՝ միջազգային օդանավակայաններ, ազգային գանձարաններ, երկրում հավատարմագրված դիվանագիտական առաքելություններ, երկաթուղային մայրուղիներ:

Պահպանության ոստիկանությունը քաղաքացիներին առաջարկում է հետեւյալ սպասարկումները.

* ոստիկանական պահպանություն
* պահպանություն՝ տեխնիկական միջոցներով
* պահպանություն-ուղեկցում՝ պահակախմբով
* ավտոմեքենայի GPS վերահսկողություն
* անձնական պահպանություն

ՍԻԼՎԱ ՍԻՓԱՆՈՒՀԻ

ՀՈԳՆԱԾ ՀՈԳԻՍ ԿԶԱՐԹՆԻ

Հոգնած հոգիս կզարթնի,
Ես հուշերից կարբենամ,
Սերս խինդից կարտասվի,
Քո խենթ գիրկը կդառնամ:
Ու հուշերիս անտառում,
Տերեւաթափ կլինի,

Հոգնած հոգիս քո գրկում,
Վերջին օրն իր կտոնի:
Կհավատամ ես կրկին,
Քո մեղավոր խոսքերին,
Առաջին ծյունը կիջնի,
Հեռվում կորած իմ շիրմին...

ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ❁ ԱՅԼԱՋԱՆ ❁ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Ե՞ՐԲ Է ՊԵՏՔ ԱՆՀԱՆԳՍՏԱՆԱԼ ԽԱԼԵՐԻՑ

Փոքրուկ երեսիս խալը միշտ անհարմարության զգացումի պատճառ է եղել: Ընկերուհիս խորհուրդ փվեց կտրել-հանել այն: Կտրեցի, արդյունքում առաջացան լուրջ հիմնախնդիրներ: Բժիշկներն ասացին, որ խալերը, որպես այդպիսիք, առողջությանը լուրջ վտանգ չեն սպառնում, այնպես որ, այն կտրելու կարիք չկար: Հետաքրքիր կլիներ իմանալ, իսկ ե՞րբ են խալերը սպառնալիք առաջացնում առողջության համար:
Մ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Նինոծմինդա

Ստորեւ ներկացացնում ենք այն դեպքերը, երբ խալերը, իրոք, կարող են լուրջ սպառնալիք ստեղծել առողջության համար.

1. Եթե խալի շուրջ գտնվող մաշկն անհասկանալի պատճառներով կարմրում է,
2. Ցավի ու քորի առկայության դեպքում,
3. Եթե խալի գույնը մգանում է,
4. Եթե խալը սկսում է մեծանալ եւ եզրերն անհարթ են դառնում,
5. Նորահայտ խալերի առատության, արյունահոսության եւ խալի վրա մազերի կտրուկ աճի դեպքում:

Իսկ ի՞նչ անել, որպեսզի խալերը վտանգավոր չդառնան.

1. Հնարավորինս քիչ մնալ արեւի տակ, խուսափել արեւային այրվածքներից,
2. Չվնասել խալի շուրջը հարող մաշկը (չքորել, չտրորել եւ դաջվածքներ չանել),
3. Դրանք հեռացնել միայն մասնագիտացված բուժհաստատություններում՝ բժիշկ-ուռուցքաբանի հսկողությամբ,
4. Խալի անգամ ամենափոքր ձեւափոխության դեպքում դիմել բժշկի:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է

ԳԵՐԱԿՏԻՎ ԵՐԵԽԱ

Յանկանում եմ կիսվել ինչ անհանգստացնող մի հարցով: Երեք երեխայի մայր եմ: Կրտսեր որդիս, ի տարբերություն ավագների, անընդհատ շարժման մեջ է, նույնիսկ քնած ժամանակ էլ կողքիկողք է շրջվում: Հոգնել չունի, պետք է ինչ-որ բան խառնի, ինչ-որ բան կոտրի: Բժիշկներն ասում են, որ գերակտիվ երեխա է, ժամանակի ընթացքում դա կանցնի: Բայց ե՞րբ, չգիտեմ՝ ինչ անել:
Ս.Վ.
Բաթումի

Հետաքրքիր է, որ, ըստ հետազոտությունների արդյունքների, երեխաների գերակտիվության եւ ցրվածության ախտանիշն ավելի հաճախ դրսեւորվում է բաց գույնի մազեր եւ երկնագույն աչքեր ունեցողների եւ գրեթե 5 անգամ ավելի տղաների, քան աղջիկների շրջանում: Ինչո՞ւ: Թերեւս բնությունն աղջիկներին ստեղծելիս հոգ է տարել, որ նրանք նույնիսկ մոր արգանդում ավելի դիմացկուն լինեն, քան տղաները:

Գերակտիվության եւ ցրվածության ախտանիշի ամենատարածված պատճառներից են հղիության ընթացքում մոր վնասվածքները, տարած վարակները, թունավորումը եւ այդ ժամանակահատվածում ընդունած դեղերի ազդեցությունը, ինչպես նաեւ՝ բնապահպանական իրավիճակի ընդհանուր վատթարացումը: Ինչպե՞ս է դրսեւորվում գերակտիվությունը: Այդպիսի երեխաներին բնորոշ է անդադար անհանգիստ շարժման մեջ գտնվելը, ուշադրության կենտրոնացման հարցում դժվարությունը, անվերահսկելի վարքագիծը:

Ասում են, որ երեխաների համար ավելի օգտակար բան չկա, քան մայրիկի քնքուշ ձեռքերի հպումը: Օրվա մեջ թեկուզ 15 րոպե գտեք փոքրիկի հետ առանձնանալու ու քնքշանքի նման պահեր պարգեւելու:

Երեխային հնարավորություն ընձեռեք իր ուժերը գործունեության տարբեր ասպարեզներում փորձելու համար:

Օրինակ, սկզբի համար լավ կլինի, եթե փոքրիկին առաջարկեք նկարել: Նրան ներկեր, մատիտներ, ֆլոմաստերներ տվեք: Սովորական ալբոմների փոխարեն, կարող եք պաստառ կամ պլակատ վերցնել, երեխայի հասակի բարձրությամբ կախել պատից: Բոլորին է հայտնի, որ փոքրիկները շատ են սիրում պատերին նկարել, ուրեմն, թողեք, որ նա դա անի: Նկարված պլակատը կարելի է հանել եւ տեղը նորը կախել: Ճիշտ կլինի նկարները դեն չնետել: Պատկերացրեք, թե ձեր երեխան որքան ուրախ կլինի այդ բոլորը տեսնելով՝ մի քանի տարի անց:

Խուսափեք անդադար դիտողություններից, փոքրիկի գործունեությանն անընդհատ միջամտելուց:

ՀՐԱՏԱՊ

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՌՕՐՅԱ ԿՅԱՆՔՈՒՄ

Արհեստական բանականությունը (ինտելեկտ)՝ այսուհետ՝ ԱԲ, փոխում է ժամանակակից կյանքի տրամաբանությունն ու ասպեկտները՝ առողջապահությունից մինչեւ ժամանց, տրանսպորտից մինչեւ կրթություն: ԱԲ-ի ազդեցությունը հսկայական է, եւ այն դարձել է մեր առօրյա կյանքի անբաժանելի մասը: Այս հոդվածում մենք կքննարկենք արհեստական ինտելեկտի կարեւորությունը առօրյա կյանքում, ինչպես է այն ազդում մեզ վրա, ինչպես է օգնում մեզ եւ ինչպես օգտվել ԱԲ-ից:

Առողջապահության ոլորտում

Արհեստական բանականությունը հեղափոխություն է կատարել առողջապահության ոլորտում՝ տրամադրելով ավելի ճշգրիտ ախտորոշումներ, մշակելով ավելի արդյունավետ բուժումներ եւ բարելավելով հիվանդների ինքնազգացողության արդյունքները: Մեքենայական ուսուցման ալգորիթմները կարող են վերլուծել բժշկական գրառումների, պատկերների (ռենդգեն, սոնոգրաֆիկ եւ այլ նկարներ) եւ գենետիկական տեղեկատվության մեծ հավաքածուներ՝ հիվանդությունների օրինաչափությունները հայտնաբերելու եւ կանխատեսելու համար:

Այս տեխնոլոգիան կարող է նաեւ իրական ժամանակում հետեւել հիվանդներին՝ նախազգուշացնելով առողջապահական ծառայություններ մատուցողներին կենսական նշանների կամ ախտանիշների ցանկացած փոփոխության մասին: Արհեստական ինտելեկտը օգտագործվում է նաեւ նոր դեղամիջոցներ եւ անհատականացված բուժումներ մշակելու համար, ինչը հանգեցնում է ավելի արդյունավետ ու կենտրոնացված խնամքի:

Ժամանցի ոլորտում

Արհեստական բանականությունը նաեւ ազդել է զվարճանքի եւ ժամանցի վրա. հոսքային (ստրիմինգային, streaming) ծառայություններն օգտագործում են առաջարկությունների ալգորիթմներ՝ օգտվողներին բովանդակություն առաջարկելու համար: ԱԲ-ն օգտագործվում է նաեւ անհատականացված երգացանկեր ստեղծելու, միտումները բացահայտելու եւ օգտագործողների ներգրավվածությունը օպտիմալացնելու համար: Խաղային արդյունաբերության մեջ արհեստական ինտելեկտը օգտագործվում է ավելի իրատեսական կերպարներ եւ միջավայրեր ստեղծելու, ինչպես նաեւ ավելի բարդ հակառակորդներ զարգացնելու համար:

Օրինակ. արդեն մեր հեռախոսները կարողանում են գուշակել մեր տրամադրությունը նույնիսկ էկրանին հպվելու ձեւից եւ ուժգնությունից, եւ գուշակելով դա, կարողանում են մեզ ներկայացնել համապատասխան երաժշտություն, տեսահոլովակ, ֆիլմ կամ ժամանցի վայր:

Տրանսպորտում

ԱԲ-ն մեծ փոփոխություն է կատարել նաեւ տրանսպորտային ոլորտում: Փոխելով մարդկանց եւ ապրանքների տեղաշարժը ամբողջ աշխարհում: Ինքնավար տրանսպորտային միջոցներից մինչեւ խելացի երթեւեկության կառավարման համակարգեր: ԱԲ-ն խթանում է նորարարությունը եւ ապահովում էական առավելություններ անվտանգության, արդյունավետության, կայունության եւ հարմարավետության տեսանկյունից:

Օրինակ. վառ օրինակ է Yandex Taxi-ն, որն օգտագործելով ԱԲ-ն առաջարկում է ավելի կարճ (կամ երկար) երթուղի, հաշվի առնելով հազարավոր պարամետրեր՝ խցանումից մինչեւ պատվիրատուի վճարողունակությունը:

Արհեստական բանականության օգտագործման առավելություններն առօրյա կյանքում

ԱԲ-ն ավելի ու ավելի է դառնում մեր առօրյա կյանքի մի մասը, նույնիսկ, եթե մենք դա միշտ չէ, որ նկատում ենք: Ահա ԱԲ-ի մի քանի դրական կիրառման օրինակներ:

1. Արհեստական ինտելեկտի վրա հիմնված թվային օգնականները սմարթֆոններում, ինչպիսիք են Siri-ն, Google Assistant-ը կամ Bixby-ն, կարող են օգնել՝ կառավարել ամենօրյա առաջադրանքները, սահմանել հիշեցումներ, տրամադրել տեղեկատվություն, ուղարկել տեքստային հաղորդագրություններ եւ այլն:
2. Օնլայն գնումներ կատարելիս ԱԲ-ն օգտագործվում է անհատականացված առաջարկներ տրամադրելու համար՝ հիմնվելով ձեր պահվածքի, զննարկման եւ գնումների պատմության վրա:
3. Արհեստական ինտելեկտը օգտագործվում է այնպիսի հավելվածներում, ինչպիսիք են Google Maps-ը եւ Waze-ը, Yandex Navigator եւ Yandex Taxi՝ իրական ժամանակում երթեւեկության տվյալները վերլուծելու եւ ամենաարագ երթուղիները տրամադրելու համար:
4. ԱԲ-ն օգնում է զտել սպամ նամակները, դասակարգել մուտքային էլ.փոստերը եւ նույնիսկ՝ արագ պատասխաններ առաջարկել էլ.փոստի որոշ հարթակներում:
5. ԱԲ-ն կարող է բացահայտել բանկային եւ առցանց գործարքներում խարդախ գործողությունների սխեմաներ: Այն կիրառվում է նաեւ բացահայտել խարդախության կանխատեսվող սխեմաները:
6. Այն կարող է նաեւ բարելավել տան անվտանգության համակարգերը, օրինակ՝ դեմքի ճանաչման տեխնոլոգիայի միջոցով:
7. Ժամանց. ստրիմինգային ծառայությունները, ինչպիսիք են Netflix-ը եւ Spotify-ը, օգտագործում են արհեստական բանականություն՝ շոուներ, կինոնկարներ կամ երաժշտություն առաջարկելու համար՝ ըստ ձեր նախասիրությունների:

Հետո ի՞նչ կլինի

ԱԲ-ն գնալով դառնում է ավելի ու ավելի խելացի, միաժամանակ առաջացնելով որոշակի մտահոգություններ: Մարդիկ արդեն մտահոգված են գաղտնիության, արդարության եւ աշխատատեղերը ԱԲ-ով օժտված մեքենաներով փոխարինելու համար: ԱԲ-ն, միաժամանակ, կարող է նաեւ օգնել մեզ՝ լուծել գլոբալ մեծ խնդիրներ: Դա կարող է օգնել՝ պայքարել կլիմայի փոփոխության դեմ, ապահովել, որ բոլորն ունենան բավարար քանակությամբ սնունդ եւ բժշկական օգնությունը դարձնեն ավելի հասանելի:

ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ

☞ *Եթե նույնիսկ դու մեն-մենակ ես, ոչ մի վատ խոսք կամ արարք թույլ մի' տուր: Սովորի'ր ավելի շուտ ամաչել ինքդ քեզնից, քան ուրիշներից:*

ԴԵՄՈԿՐԻՏ

☞ *Նա, ով լողում է առանց ուղղությունը փոխելու, ամենայն հավանականությամբ, կվերադառնա նորից այնտեղ, որտեղից սկսել էր:*

ՃԱՊՈՆԱԿԱՆ ԱՍԱՑՎԱԾՔ

☞ *Անշնորհակալ որդին գորտնուկ է հոր դեմքին՝ կտրելը ցավոտ է, թողնելը՝ տգեղ:*

ՉԻՆԱԿԱՆ ԱՍԱՑՎԱԾՔ

☞ *Եթե քեզ զսպես մեկ րոպե, ափսոսանքի առիթ չես ունենա հարյուր օր:*

Ս.ՄՈՒՐԴԱՅԱՆ

«Վրաստանի» ընթերցող
Ախալքալաքի

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ, ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄ, ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԿՐՃԱՏՈՒՄ...

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻԿԱ ՀԻՆԳ ՏԱՐԻՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Հրապարակվել է Հայաստանի կառավարության 2026-2031 թվականների գործունեության ծրագիրը, որում անդրադարձ կա կառավարության գործունեության ակնկալվող ուղենշային արդյունքներին:

Ծրագրում նշվում է, որ Հայաստանի կառավարության 2026-2031 թվականների գործունեության ակնկալվող ուղենշային արդյունքներն են Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հաստատված խաղաղության ամրապնդումը եւ հետագա ինստիտուցիոնալացումը, Հայաստանի շուրջ անվտանգային բարենպաստ միջավայրի պահպանումը եւ հետագա զարգացումը տարածաշրջանի երկրների հետ հարաբերությունների կարգավորման եւ զարգացման, ինչպես նաեւ տարածաշրջանից դուրս գոյություն ունեցող գործընկերությունների խորացման ճանապարհով:

Հաջորդ ուղենիշը Հայաստանի ապաշրջափակումն է «Խաղաղության խաչմերուկ» ծրագրի, TRIPP նախագծի հիման վրա:

Ուղենշային մյուս ակնկալվող արդյունքը ժողովրդավարական, հակակոռուպցիոն, տնտեսական, հանրային կառավարման բարեփոխումների խորացումն է, որը կչափվի միջազգային ամենահեղինակավոր վարկանիշային ցուցակներում Հայաստանի առաջընթացով:

Կառավարության առաջիկա տարիների գործունեության ակնկալվող ուղենշային արդյունքներից են ամբողջ բնակչության ներառումն առողջության ապահովագրության համակարգում, Հայաստանի քաղաքացիների համար ԵՄ մուտքի վիզաների ազատականացումը, տարեկան միջինը 6 տոկոս տնտեսական աճը, 125 հազար նոր աշխատատեղերի ստեղծումը, կորպորատիվ պարտատոմսերի շուկայի ծավալի ավելացումն առնվազն երեք անգամ, հայաստանյան ծագման ապրանքների արտահանման ծավալի առնվազն կրկնապատկումը, արդյունաբերական արտադրանքի թողարկման ծավալների 50 տոկոս աճը (ընթացիկ գներով)՝ 2025 թվականի 3,3 տրլն ՀՀ դրամից հասցնելով մինչեւ 5 տրլն ՀՀ դրամի, գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքի ավելացումն առնվազն 50%-ով, հացահատիկի արտադրության կրկնապատկումը, 10 ջրամբարի կառուցման մեկնարկը՝ 2033 թվականին ավարտելու նպատակադրումով, 350 կմ ջրանցքների եւ խողովակաշարերի կառուցումը եւ վերակառուցումը, ոռոգման ապահովումը 10 հազար հեկտար նոր հողերի համար, 24-ժամյա ջրամատակարարման ապահովումը Երեւանում, Գյումրիում եւ Վանաձորում:

Ուղենշային հաջորդ ակնկալվող արդյունքներն են ՀՀ կառավարության 300 դպրոցի, 30 քոլեջի, 100 արտադպրոցական հաստատության, 100 մանկապարտեզի, 100 կոմբինացված խաղահրապարակի (ներառյալ՝ համայնքային լողավազանները) կառուցումը, վերակառուցումը, հիմնանորոգումը եւ ամբողջական գույքով հագեցումը, գործարկումը, աղքատության կրճատումը 5 տոկոսային կետով, ապօրինի, այդ թվում՝ կոռուպցիոն եղանակով ստացված ակտիվների վերադարձի գործընթացի շարունակականությունը, վերականգնված միջոցների միասնական հաշվեհամարի շարունակական համալրումը, ապօրինի ծագում ունեցող անշարժ ու շարժական գույքերի վերադարձը հանրությանը՝ շուրջ 2 մլրդ դոլար համախառն ծավալով:

ԿԱՐԵՎՈՐՎԵՑ ՀԱՅ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎՈՂԱԿԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄԸ

Օգոստոսի 18-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդունել է ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի անդամ Աբրահամ Համադեին:

Հանդիպմանը Նիկոլ Փաշինյանը կարեւորեց Հայաստան-ԱՄՆ հարաբերությունների հետեւողական զարգացումը եւ նշեց, որ վերջին շրջանում այն կրում է դինամիկ բնույթ: Նիկոլ Փաշինյանն ընդգծեց երկկողմ փոխգործակցության հարուստ օրակարգի հետեւողական առաջմղման անհրաժեշտությունը՝ վստահություն հայտնելով, որ Հայաստան-ԱՄՆ կապերը կշարունակեն ընդլայնվել ինչպես քաղաքական, այնպես էլ՝ տնտեսական եւ տեխնոլոգիական ոլորտներում:

Աբրահամ Համադեն շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության համար եւ կարեւորեց երկխոսության զարգացումը նաեւ խորհրդարանական ձեւաչափով:

Զրուցակիցները մտքեր փոխանակեցին տարածաշրջանային գործընթացների, ինչպես նաեւ TRIPP նախագծի իրականացման ընթացքին վերաբերող հարցերի շուրջ:

ԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԱՌԱՋԻԿԱ ՔԱՅԼԵՐԸ

«Կրթվելը նորածեւ է» շարժման շրջանակում Հայաստանի վարչապետի տիկին, «Իմ քայլը» հիմնադրամի գործադիր տնօրեն Աննա Հակոբյանը հրապարակեց ընտանեկան բռնության դեմ պայքարին նվիրված տեսանյութերի շարքի առաջին ամբողջական հոլովակը՝ ներկայացնելով խնդրի լուծմանն ուղղված իր մոտեցումն ու առաջիկա քայլերը:

Տեսաուղերձում Աննա Հակոբյանն ընդգծում է, որ բռնության տարբեր դրսեւորումները թաքցնող հայ ընտանիքի մոդելը պետք է փոխարինվի բռնությունից զերծ, փոխադարձ սիրո եւ հարգանքի վրա հիմնված, ներդաշնակ ու անվտանգ ընտանիքի մոդելով: Նրա խոսքով՝ Հայաստանը պետք է ունենա հստակ, իրատեսական, գործուն եւ տուժողակենտրոն օրենսդրական ու իրավակիրառ մեխանիզմներ:

Այս նպատակով Աննա Հակոբյանն արդեն նախաձեռնել է քննարկումներ՝ Հայաստանից եւ սփյուռքից ներգրավված անկախ փորձագետների, ոլորտի պատասխանատուների, ինչպես նաեւ նախկինում այս ուղղությամբ աշխատած կին պատգամավորների հետ:

Նախաձեռնության առաջին փուլում նախատեսվում է մշակել ամբողջական եւ արդյունավետ օրենսդրական կարգավորումներ, եւ դրանք ներկայացնել Ազգային ժողովի քննարկմանը:

Երկրորդ փուլը նախատեսվում է օրենքի ընդունումից եւ ուժի մեջ մտնելուց հետո: Այն ներառելու է հանրային լայն իրազեկման արշավ, իրավասու մարմինների աշխատակիցների վերապատրաստում եւ ընդունված կարգավորումների արդյունավետ կիրառում:

Զուգահեռաբար հեղինակավոր փորձագետներից կազմված խումբը նախապատրաստում է համազգային հետազոտություն՝ Հայաստանում կանանց նկատմամբ ընտանեկան բռնության իրական տարածվածության վերաբերյալ վստահելի եւ հնարավորինս ամբողջական տվյալներ հավաքագրելու նպատակով:

14-ԱՄՅԱ ՏԻԳՐԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԸ ՀԱՂԹԵՑ ՄԱԳՆՈՒՍ ԿԱՌԼՍԵՆԻՆ

ՖԻԴԵ-ի 14-ամյա վարպետ, 2025 թվականին մինչեւ 14 տարեկանների Եվրոպայի փոխչեմպիոն Տիգրան Համբարձումյանը օգոստոսի 18-ին կայացած «Titled Tuesday» շախմատի առցանց մրցաշարում հաղթանակ է տարել աշխարհում ամենաբարձր վարկանիշ ունեցող, շախմատի բոլոր երեք ձեւաչափերում եւ դասական շախմատի աշխարհի հնգակի չեմպիոն Մագնուս Կարլսենի նկատմամբ:

Titled Tuesday-ը Chess.com հարթակում անցկացվող առցանց արագ շախմատի մրցաշար է, որին մասնակցում են ՖԻԴԵ-ի եւ ազգային շախմատային տիտղոսներ ունեցող խաղացողներ: Մրցաշարն անցկացվում է շվեյցարական համակարգով՝ 11 տուրով, 5 րոպե՝ առանց յուրաքանչյուր քայլի համար հավելման ժամանակի:

Մրցաշարին պարբերաբար մասնակցում են աշխարհի ուժեղագույն շախմատիստները:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐՆ ԱՎԵԼԱՑԵԼ ԵՆ

2026 թվականի հունվար-հունիսի դրությամբ, դեպի Եվրամիություն արտահանման ծավալը գերազանցել է 516 միլիոն դոլարը, ինչը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ (շուրջ 287 միլիոն դոլար), բարձր է ավելի քան 80 տոկոսով:

2026 թվականի առաջին կիսամյակում դեպի ԵՄ արտահանումը, 2017 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ (մոտ 301 միլիոն դոլար), աճել է ավելի քան 71 տոկոսով:

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ԿՀԱՍՑՎԻ 300 ՀԱԶԱՐ ԴՐԱՄԻ

Ուսուցիչների կամավոր ատեստավորման համակարգում նախատեսվում է խրախուսման նոր մեխանիզմ:

Հայաստանի կառավարության նոր ծրագրով՝ 90 տոկոսից բարձր արդյունք ունեցող ուսուցիչների համար հաջորդ ատեստավորման ժամանակ նախատեսվում է հնարավորություն՝ 200 հազար դրամի փոխարեն, ունենալ 300 հազար դրամ դրույքաչափ:

Կամավոր ատեստավորման լրամշակված կարգը նախատեսվում է առաջիկայում ներկայացնել հանրային քննարկման:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՐԱՆՑՎԵԼ Է ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ 6,7 ՏՈԿՈՍԻ ԱՃ



2026 թվականի երկրորդ եռամսյակում Հայաստանի Համախառն ներքին արդյունքն (ՀՆԱ) ընթացիկ գներով կազմել է 2 տրլն 834 մլրդ 894.2 մլն ՀՀ դրամ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի՝ 2 տրլն 537 մլրդ 409.2 մլն ՀՀ դրամի համեմատ:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ ՀՀ-ում ՀՆԱ-ն աճել է 6,7տոկոսով:

2026 թվականի երկրորդ եռամսյակում Հայաստանում, մեկ շնչի հաշվով, ՀՆԱ-ն կազմել է 913 հազ. 892 ՀՀ դրամ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի՝ 823 հազ. 86 ՀՀ դրամի համեմատ:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՕԳՈՍՏՈՍԻ 19-ԻՆ ՎՐԱՑ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆ ՆՇԵՑ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ

Օգոստոսի 19-ին Վրաց Ուղղափառ եկեղեցին նշեց Փրկչի Պայծառակերպության տոնը:

Տոնի առիթով Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք, Մցխեթա-Թբիլիսիի արքեպիսկոպոս եւ Բիճվինթայի ու Ցխում-Աբխազիայի միտրոպոլիտ, Սրբազնագույն եւ Երանաշնորհ Շիո Երրորդը Սամթավրոյի մայրերի Սուրբ Նինոյի վանքում՝ Պայծառակերպության տաճարում մատուցեց Սուրբ Պատարագ:

Հիշեցնենք, որ Պայծառակերպության տոնը Տիրոջ 12 տոներից մեկն է: Ամեն տարի Երուսաղեմում կատարվում են երեք տեսանելի հրաշքներ՝ երկնային կրակի իջնելը Զատկի օրը, Հորդանան գետի շրջադարձը Աստվածահայտնության օրը (հունվարի 19-ին) եւ ամպի հայտնվելը Թաբոր լեռան վրա օգոստոսի 19-ին՝ Պայծառակերպության գիշերը:

Սուրբ Պայծառակերպության տոնին եկեղեցիներում օրհնվում է խաղողը եւ այլ մրգեր:

ԵՂԱՆԱԿ

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՇՈԳԵՐԸ ՊԱՀՊԱՆՎՈՒՄ ԵՆ, ԻՍԿ ԲԱՐՁՐԱԼԵՌ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԸ ՉԳԱԼԻՈՐԵՆ ԿՆՎԱԶԻ

Օգոստոսի 24-ից 27-ը Վրաստանում սպասվում է հիմնականում տաք եւ արեւոտ եղանակ, իսկ մայրաքաղաք Թբիլիսիում օդի ջերմաստիճանը կտատանվի +29°C-ից +33°C-ի սահմաններում:

Բաթումիում եւ երկրի ծովափնյա շրջաններում եղանակն ավելի մեղմ կլինի. ցերեկային ժամերին կարծանագրվի +26°C-ից +28°C, հնարավոր են կարճատեւ ամառային տեղումներ:

Լեռնային եւ բարձրլեռնային շրջաններում գիշերները զգալիորեն կհովանա, իսկ ցերեկային ջերմաստիճանը չի անցնի +22°C-ը:

Ծովի մակարդակից 2 000 մետրից ավելի բարձրության վրա գտնվող Նինոծմինդայի մունիցիպալիտետի Փարվանա եւ Բորժոմիի մունիցիպալիտետի Տաբածղուրի լճերի ավազանի գյուղերում սպասվում է փոփոխական եղանակ. նշված ժամանակահատվածի սկզբում կլինի տաք ու արեւոտ, իսկ օգոստոսի 25-ից ակնկալվում է ջերմաստիճանի նվազում եւ անձրեւ: Ցերեկային առավելագույն ջերմաստիճանը կհասնի +20°C-ի, իսկ գիշերը կլինի բավականին զով՝ +9°C-ից +11°C-ի սահմաններում, հնարավոր են տեղումներ:

Ղազբեգիի մունիցիպալիտետի Ստեփանծմինդա, Կոբի գյուղերում նույնպես սկզբում տաք ու արեւոտ, իսկ ժամանակահատվածի վերջում կանխատեսվում է զգալիորեն հով ու անձրեւոտ եղանակ: Ամենազով օրը՝ օգոստոսի 27-ին, ցերեկային ջերմաստիճանը կտատանվի +10°C-ից մինչեւ +14°C, գիշերը կգրանցվի մոտ +8°C, եւ մեծ է տեղումների հավանականությունը:

ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՐՈՐԴՆԵՐԻ

ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՍԵՑՎՈՂ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ

Արդեն բավական երկար ժամանակ է, ինչ Վրաստանում վարորդների վարորդական իրավունքին կցվում է ամենամյա 100 միավորը: Ճանապարհային երթեւեկության կանոնների խախտման դեպքում, միավորները հանվում են եւ ելնելով խախտման բարդությունից ու ծանրությունից, միավորների թիվը տատանվում է:

Նրանից հետո, երբ ներդրվեց 100 միավորի համակարգը, ճանապարհային երթեւեկության կանոնների կոնկրետ խախտումների կապակցությամբ, հանվող միավորների թիվը մի քանի անգամ վերանայվեց: Վերջին անգամ կարգի խստացման ուղղությամբ վերանայումը կատարվեց այս տարի, եւ այն առնչվում է այնպիսի խախտումներին, ինչպիսիք են անվտանգության գոտու անտեսումը, արագության գերազանցումը, բջջային հեռախոսից օգտվելը, երթեւեկության խուսանավման կարգի խախտումները, երթեւեկությունը մայթերով եւ ավտոբուսի համար նախատեսված գոտիով:

«Վրաստան» թերթը հետաքրքրվեց, թե, ներկա դրությամբ, գործող ո՞ր կանոնի խախտման համար քանի միավոր է հանվում: Ստորեւ ներկայացնում ենք ՆԳ նախարարության պարեկային ոստիկանությունից ստացված տեղեկատվությունը:

Անվտանգության գոտու անտեսման համար՝ 10 միավոր, արագությունը 15-ից մինչեւ 50 կմ/ժամով գերազանցման դեպքում՝ 10 միավոր, 50 կմ/ժամից ավելի արագության գերազանցման համար՝ 20 միավոր, տրանսպորտային միջոցը վարելիս բջջային հեռախոսից օգտվելու դեպքում՝ 10 միավոր, երթեւեկության ժամանակ խուսանավման կարգի խախտման դեպքում՝ 20 միավոր, մայթով երթեւեկելու համար՝ 30 միավոր, ավտոբուսի համար նախատեսված գոտում երթեւեկելու համար՝ 15, կրկնության դեպքում՝ 30 միավոր, երթեւեկության հակառակ ուղղությամբ ավտոբուսի համար նախատեսված գոտիով շարժման համար՝ 30 միավոր, ալկոհոլի ազդեցության տակ մեքենան վարելու դեպքում՝ 30 միավոր, մեքենան վարելու ընթացքում ալկոհոլային ստուգումից հրաժարվելու դեպքում՝ 40 միավոր, թմրանյութի կամ հոգեմետ դեղորայքի ազդեցության ներքո մեքենան վարելու համար՝ 40 միավոր, սահմանված չափից ավելի մեքենայի կողմից շրջակա միջավայրի ախտոտման դեպքում՝ 10 միավոր, երթեւեկության կանոնների խախտման դեպքում, որը հանգեցնում է տրանսպորտային միջոցի, բեռի, ճանապարհի, ճանապարհային կառույցի կամ այլ գույքի վնասմանը կամ մարդու մարմնական վնասվածքի՝ 25 միավոր:

ՍԻՄՈՆ ԿԻԼԱՋԵ

Թբիլիսիի թիվ 104 հանրային դպրոցը, «Վրաստան» թերթի խմբագրությունն իրենց վշտակցությունն են հայտնում դպրոցի վրաց լեզվի եվ գրականության ուսուցչուհի Լալի Չավախիձեին, ամուսնու՝

Զուրաբ Հենրիխի ՆԻՆՈՒԱՅԻ

մահվան կապակցությամբ եւ ցավակցում են հանգուցյալի հարազատներին ու մերձավորներին:



ԽԱՉԲԱՌ

ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ. 7.Գետային ջրահարս: 9.Կանոնավոր հետեւակ սուլթանական Թուրքիայում: 10.Պատիվ, հարգանք: 11.Մետաղի վարպետ: 12.Այս տեսակի: 15.Խաղի ժամանակահատված: 16.Անբավարար գնահատական: 17.Երկար ու սուր ծայրով խոցող սառը զենք: 19.«... Դու» մուլտֆիլմ: 21.Հոմոսապիենս: 24.Հրաբուխ՝ Իտալիայում: 25.Հավաքել, կուտակել: 27.Քաղցր, բարձր կալորիականությամբ սննդամթերք: 28.Ալբանական դրամը: 30.Բանջարեղեն: 34.Գետ Վրաստանում: 35.Ռազմական նավերի միավորում: 38.Անձնական դերանուն: 39.Անստեղծ: 41.Ամաչել, կարմրել: 44.Իշխանություն խորհրդանշող բազկաթոռ: 45.Անորոշ, երերուն: 46.Բակի, մուտքի դուռ: 48.Ամերիկացի ռեփեր ...Շաքուր: 49.Շաղկապ: 50.Հանճնարարագիր: 51.Ազգությամբ հայ ֆրանսիական էստրադային երգչուհի Քրիստիան ...:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.«Թեհրան-...», ֆիլմ: 2.Կանխատեսում, ենթադրում: 3.Մետաքսի որդ: 4.Գիպսակերտ: 5.Սամցխե-Ջավախեթիի նախկին պետական լիազոր ... Ամիրանաշվիլի: 6.Կինոդերասան Բրյուս ...: 8.Պարպվել, անմարդաբնակ դառնալ: 13.Վրացական հայտնի շինարարական ընկերություն ... Պլյուս: 14.Բոլիվիայի մայրաքաղաքը: 18.Մեսրոպատառ: 20.Հաննիբալի հայրը՝ Համիլկար ... (Կարթագեն): 22.Հայ երգիչ: 23.«...-յաման»: 26.XIII դարի վերջի հայ-վրացական պետական գործիչ, զորավար Խութլու ... Արծրունի: 29.Աբեղա, աքեմավոր: 31.Հեղուկ շարակցական հյուսվածքի տարատեսակ: 32.Կարող, ընդունակ: 33.Բրդից գործած: 35.Որեւէ բնագավառի մեջ նոր թափանցել: 36.Լեռ Իսպանիայում: 37.Երկրպագում, դավանում: 40.Անգլիացի գրող ... Քրիստի: 42.Ոդիսեւսի հայրենի կղզին: 43.Լոգարիթմական հարաբերական մեծության արտահամակարգային միավոր: 46.Կծու ապուր: 47.Հայ գուսան:

Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ. 1.Անպարտելի: 6.Հայկ: 9.Սուր: 11.Նորայր: 12.Արարատ: 14.Են: 15.Հաչող: 16.Իսկ: 17.Կենտաուր: 19.Սեզ: 20.Սալ: 21.Կահիրե: 23.Արի: 24.Քիչ: 25.Անապատ: 29.Րոպե: 30.Իրմա: 32.Կլոդ: 34.Ղեր: 35.Իր: 37.Ակր: 38.Դարավոր: 40.Հաագա: 42.Վոլգա: 44.Ալխո: 46.Որոնք: 47.Սա: 48.Բիտումի: 49.Այ: 50.Հանս: 52.Մե: 53.Կարմեն: 55.Աննա: 56.Արար: 57.Դրո: 58.Լեոն: 59.Արտաշես:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.Նարգիզ: 3.Ալյակ: 4.Երանելի: 5.Իսահակ: 6.Հրաչուհի: 7.Կոտ: 8.Տնտեսվար: 10.Ուրանաք: 13.Տորիչելլի: 14.Եկար: 18.Բել: 20.Սատիրա: 22.Ապեր: 26.Նողկալի: 27.Ապերախտ: 28.Սարվոր: 31.Միավոր: 33.Դումբածե: 36.Երգն: 37.Ահաբեկել: 38.Դա: 39.Ոլորան: 41.Գոուլման: 43.Աքիս: 45.Միանալ: 50.Հնար: 51.Նանա: 52.Մարս: 54.Եր: 57.Դե:

Գլխավոր խմբագիր, տնօրեն՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Պատասխանատու քարտուղար՝ ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ՀՅՈՒՐՀՈՆԱԿԱՆ ՄԻՆՍՀԱՐՈՒՄ: ՄԱՅԼՈՆՈՒ 0105, Գ.ԱՓՈՆԵԼՈՒ ՓՈՂՈՑ 5,
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աբոնելի փ. 5
ԹԵԼԵ. Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«Տորի» հրատարակչություն

«ՎՐԱՍՏԱՆ»
ՄԱՅԼՈՆՈՒ, ՆԱՀԱՐԱՊԵԼՈՎ
"VRASTAN"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445

Պարբերականում օգտագործվել են վրացական, հայաստանյան, օտարերկրյա մամուլի, ինչպես նաեւ տեղեկատվական գործակալությունների եւ համացանցկայքերի նյութերը: Խմբագրության դիրքորոշումը կարող է չհամընկնել հեղինակների կարծիքի հետ: